

ՀՃԺԿ

№ 251 А

ԳԺԻ ՅԵՎ ԿԸՌՈՒՑՎ ԸԺՔՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ ԸԿԸՆ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ
Գ Ծ Ի Հ Ս Կ Ո Ղ Ի Ն
(ՇՐՋԱԳԱՅՈՂԻՆ)

ВМБЛИ-ЛЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԱՆԳՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿԱԹԳԾԻ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

1 9 3 5

656.2

z. 99

14.06.2017

24 SEP 2010

36-4
U21007

ՀՃԹԿ
ԳԾԻ ԿՈՐՁԱԿԱՅՈՂՈՒՄԻ
ԿԵՆՏՐԱԼՆԵՆ ՎՈՐԶՈՒԹՅՈՒՆ

656.2
2-99

002-07400
00000
00000
00000
00000

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԳԾԻ ՀՍԿՈՂԻՆ (ՇՐՋԱԳԱՅՈՂԻՆ)

77	Ներկա հրահանգը պետք է մացվի Յեր-կաթուղային գործակալներին ձեռնարկ-ներով մասակարարման կանոններով՝
577	(բր. 0/198) ըստ կարգի № 107-ա հա-մարի տակ:

ԼՇԿ-3

ФИЛИАЛ
ИНСТИТУТА
ЭКОНОМИЧЕСКИХ
Академии Наук
СССР



ԱՆԿՐԿՈՎԿՈՍՏՆՆ ՆԵՐԿՈՒԳԾԻ ՎՈՐԶՈՒԹՅՈՒՆ

1 9 3 5

Թարգմանիչ՝ ՅԵԴԻԳՍԻՑԱՆ
Խմբագիր՝ ՄԻՇԻԿՅԱՆ
Թողարկիչ, ՄԻՐԿՈՎԻՉ
Պատվեր — 1578
Գլավիտա — Ա — 1340
Քանակ — 800

Հաստատում եմ,
Գծի և կառուցվածքների
Կենտրոնական Կառավար-
չության պետի ժամանա-
կավոր պաշտոնակատար՝
ԿՅՈՒՆՆԻՐ

Ձեռն գեկտեմբերի 1934 թ.

Հ Ր Ա Հ Ա Ն Պ

ԳՄԻ ՀՍԿՈՂԻՆ (ՇՐՋԱԳԱՅՈՂԻՆ)

1932 թ. բր. պ/364 գծի պահպանի հրահանգի վերացմամբ, հաստատված գծի կենտրոնական կառավարչության (ՅՈՒՊ-ի) կողմից 1932 թ. հունիսի 10-ին յեվ հաստատված ՀՃԺԿ-ի (գծի յեվ կառուցվածքների կենտրոնական կառավարչության կողմից) 1932 թ. հունիսի 14-ին № 28 (ՑՊ):

Լ. ՊԱՇՏՈՆԸ, ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՅԵՎ ՍՏՈՐԱԴՐՎԵԼԸ

§ 1. Գծի հսկողը նշանակվում է գիծը և գծային կառուցվածքները գննելու, նաև գծի պատկանելիքների և յերկաթուղային գույքի ամբողջությանը և պահպանմանը հսկելու համար, իրեն հանձնարարված գծի պտույտի սահմաններում:

§ 2. Գծի հսկողի պաշտոնի նշանակվող անձը պետք է բավարարե հետևյալ պահանջներին՝

ա) Հասակ ունենալ 18 տարեկանից վոչ պակաս և լինեն գրագետ.

բ) Աշխատել իբրև նորոգման բանվոր մեկ տարուց վոչ պակաս.

գ) Անցնել նախնական բժշկական դիսուսն և յերկաթուղային տրանսպորտի բանվորների և ծառայողների այս դիսցիպլինար կանոնադրության հրահանգի (նրա տեխնիկական բաժանումով) և աղբաշնանով կանոնների գիտենալու մասին քննություն բըռնել:

§ 3. Գծի հսկողն անկախ ծառայության նշանակելիս, հիմնական քննության յենթարկվում և սարքերական քննությունների յերկաթուղում սահմանված կարգով:

§ 4. Գծի հսկողը ծառայության նշանակվում և, տեղափոխվում և ծառայությունից արձակվում և գծի դիստանցիայի պետի կողմից ճանապարհի վարպետի ներկայացմամբ:

§ 5. Գծի հսկողն անմիջապես ստորադրվում և գծի բրիգադիրին և կատարում և նրա կարգադրությունները:

§ 6. Գծի հսկողը պարտավոր և նույնպես կատարել այն կարգադրությունները, վորոնք նա ստանում և անմիջապես ճանապարհի վարպետից և ճանապարհի ավագ վարպետից, գծի դիստանցիայի պետից, գծի սպասարկման պետից, յերկաթուղու պետից և սրանց փոխարինողներից: Ստացված կարգադրությունների մասին գծի հսկողը ղեկուցում և գծի բրիգադիրին, հաղորդելով թե, ինչպես են նրանք կատարված:

Յնթե կարգադրություններ սովող անձինք գծի

հսկողին հայտնի չեն, այդ դեպքում նա պարտավան և պահանջել ներկայացնելու անձնական վկայական:

§ 7. Ծառայության մտնելիս գծի հսկողին ճանապարհի վարպետը տալիս և ներկա հրահանգը: Լեղանշանների կանոնները, յերկաթուղային տրանսպորտի բանվորների և ծառայողների դիսցիպլինար կանոնադրությունը, ձևքի գույնավոր ազդանշանային դրոշակների կոմպլեկտ և ազդանշանային լսատեր, սպիտակ և գույնավոր ապակիներով, տուփ վեց ճաթեղաներով (պետարդներով) աղանշանային փշելու յեղջյուր գամի, (կուտիլի) մուրճ, պտուտակի բանալի, համարային նշան, յերկաթե և փայտե թիչեր, փոցխեր, թորխի (խոտը քաղհան անելու համար, ցախավել և բալաների ու գամերի (կոտիլներ) պաշար: Այս բոլորն ընդունվում և փոխատրման տեղեկագրով, վորի յերկուրդ օրինակը ստորագրած գծի հսկողի կողմից, պահվում և ճանապարհի վարպետի մոտ:

II. ԳԾԻ ՀՍԿՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 8. Գծի հսկողը պարտավոր և.

ա) Կատարել գծի և գծային կառուցվածքները կննությունը դիստանցիայի պետի կողմից հաստատված գծագրով (գրաֆիկով) և չվացուցակով, շթույր տալով ուրիշի փոխարեն հերթապահությամբ փոխարինելն առանց ճանապարհի վարպետի թույլտվությանը:

բ) Պնդացնել թուրայած ռելային կցման տեղերը, նույնպես և կամրջային գլղոնների բուրեքն այնտեղ, վորտեղ չկան հատուկ կամրջայրն պահապաններ:

դ) Քաղհանել գծի վրայի խոտը և ուղղել նրան հանձնարարված շրջուցու սահմաններում խճավազի շերտը:

դ) Ազդանշաններով պատասպարել գծի անսարք տեղերը, յեթե այդ խոշնդոտը հնարավոր չէ. ինքնուրույն վերացնել:

յե) գծից հեռացնել սահմանված կանոնները խախտող բոլոր անձանց (տես § 28):

§ 9. Գծի հսկողն իր պաշտոնեյական պարտականությունները կատարելիս պետք է առաջնորդի նրան աված իր ստորադրության տակ ներկա հրահանգով, ազդանշանների կանոններով, յերկաթուղային տրանսպորտի բանվորների և ծառայողների գիացիսլինար կանոնադրությունով, նույնպես և ճանապարհում գործող հրամաններով, կանոններով և կարգադրություններով, վորոնք վերաբերվում են գծի հսկողի պաշտոնին:

§ 10. Գծի հսկողը գտնվելով յերկաթուղային գրծերում, պետք է լինի սահմանված զգեստում և իր հաշուստում, այնպիսի գույն չպետք է լինի, վորը կարող է ընդունվել, իբրև ազդանշանային գույն:

§ 11. Աշխատանքի մեջ գտնվող գծի հսկողն իր մոտ պետք է ունենա ա) ցերեկը, ցերեկվա, իսկ գիշերը՝ գիշերվա ձեռքի ազդանշաններ, բ) ազդանշանային յեղջուր, գ) ճայթոիկներով (պետարպներով) տուփ, դ) պտուտմերի բանալի, յե) համարային նշան, ն) գամի (կոստիլի) մուրճ, ե) յերկաթի թի և ը) յերկու բոլոր ու յերկու գամ (կոստիլն):

Գիշեր և մառախուղոտ ժամանակ գծի հսկողը պարտավոր է գիծը շրջադայելիս ունենալ վառած ազդանշանային լապահր:

Գերանդին, փոցիկերը, փայտե թիւ, խոտը քաղհանելու և պատտան ուղղելու և ուրիշ պատկանելիքները վերցնում են հարկ յեղած դեպքում:

§ 12. Գործիքը, կամ ազդանշանային պատկանելիքները փչաղնելիս, կամ կորցնելիս գծի հսկողը պարտավոր է անմիջապես այդ մասին հաղորդել գծի քրիզադիրին: Անպետք գործիքները և ազդանշանային պատկանելիքներն այնպես գծից հանված կցման պարագաները հանձնվում և գծի քրիզադիրին:

§ 13. Գծի հսկողը չպետք է հաղորդե կողմնակի անձանց յերկաթուղուն և նրա հորինվածքներին վերաբերվող վորեն տեղեկություններ:

§ 14. Գիծը և կառուցվածքները զննելիս գծի հսկողը պարտավոր է.

1) Հատուկ ուղադրություն դարձնել ուլսային անցքերի դրության վրա, չկա արդյոք ուլսերում ճեղքվածքներ կամ բեկվածք, չկան արդյոք ճեղքվածք մակադիրներ, տակդիրներ, թուլացած գայկաներ և յաղաղացքաընդրեմ ճանկեր, նույնպես բարձրացած, ծոված և կոտրտված գամեր (կոստիլներ), շարդված, ուռուցքի փայտե տակդիրներ:

2) Գծի հսկողի կողմից գծի վորեն վնասվածք հայտնաբերելիս — անմիջապես վերացնել այդ վնասվածքը, իսկ յեթե ինքը չի կարող վերացնել, իսկ վնասվածքն այնպիսին յե, վորը սպառնում է զնացքների յերթեկեկության անվտանգությանը (պայթած ուլս, պնզացուսների բացակայություն, միացման տեղում յերկու պայթած մակադիրները, գծի ծովածք շոգից, աչքով նշմարելի գծի լայնացում և նեղացում, խճավազի շերտի շրատարումն, հողի պատտաուի փըլ-

վածք և այլն) — գծի հսկողը պարտավոր է վտանգավոր տեղը պատասպարել կանգառի ազգանշաններով հետևյալ կերպով.

ա) Անմիջապես գծի վրա ամբոցնել ուղիների արանքում յերկաթե թի կարմիր բացված գրողակով, իսկ գերեզը և մառախուղի ժամանակ թիուն կապել վառած ազգանշանային լապտեր, վորից հետո արագ կերպով գնալ այն կողմը, վորտեղից գնացքը սպասվում է, և ընդհանուր ահակոչի ազգանշանով, յեղջյուրով ողնության կանչել բրիգադիրներին, կամ բանվորներին:

բ) Յեթե ահակոչի ազգանշանով գա նորոգության բանվոր, կամ հարևան գծի հսկողը, այդ դեպքում նրան տալ յերեք ճայթոխիկներ և հանձնարարել պատասպարել տեղը մյուս կողմից, իսկ իրեն շարունակել գնալ սպասվող գնացքի կողմը:

գ) Վտանգավոր տեղից 1200 մետր անցնելով, ուղիների վրա գարսել ճայթոխիկներ — յերկուսը սպասվող գնացքի ընթացքի աջ ուղիի վրա, իսկ մեկը ճախ ուղիի վրա, վորից հետո վերադառնալ գեպի վտանգավոր տեղը և այնտեղ մնալ մինչև գծի բրիգադիրի, կամ նույնանման ավագ բանվորի ժամանումը:

դ) Յեթե ահակոչի ազգանշանով վոչ վոչ չգա, այդ դեպքում, գծի հսկողը վտանգավոր տեղը սպասվող գնացքի կողմից ճայթոխիկներով պատասպարելուց հետո (1200 մետր տարածության վրա), պարտավոր է հետ գնալ և վտանգավոր տեղից 1200 մ. անցնելով, նույնպես պատասպարել նրան յերեք ճայթոխիկներով: Իրանից հետո գծի հսկողը պետք է վերադառնա վտան-

գավոր տեղը և սպասի գծի բրիգադիրի, կամ նորոգման ավագ բանվորի ժամանմանը.

յե) Գծի հսկողը վտանգավոր տեղը հայտնաբերելու մոմենտից, մինչև բրիգադիրի, կամ նորոգման ավագ բանվորի ժամանումը պարտավոր է ամբողջ այդ ժամանակամիջոցում յեղջյուրով տալ ընդհանուր ահակոչի ազգանշան:

Նկատելով յերևացող գնացքն անմիջապես գնացքի դեմ վազել, տալով կանգառի ազգանշան:

3. Գնացքն անցնելուց հետո, հետևել, արդյոք կայծերը, կամ վառվող ածուխը չեն ընկել կամուրջների փայտե մասերի մեջ, գծի յերկարությամբ գասավորված շենքերը և նյութեղենների պահեստները. անսպասան հանգցնել կայծերը և ածուխը, իսկ սկզբող հրդեհի դեպքում — ցույց տալ կանխառի ազգանշան և յեղջյուրավոր ողնություն պահանջել, տալով հրդեհային ահակոչի ազգանշան:

4. Հատուկ պահապաններով չպահպանվող կամուրջներն անցնելիս ստուգել պինդ են արդյոք պտտած լայնքսի զլոտններն ամբողջող բոլտերի գալիաները, և անմիջապես պտուտակել նրանց արդյոք ջրով լցրած են կամուրջների մոտ տեղավորված տակառները, սարքին են սրբիչները, (швабры) ու տակառներում ջրի պակասության դեպքում, անմիջապես հայտնել դրա մասին գծի բրիգադիրին:

5. Կամուրջային պահապաններով չպահպանվող կամուրջներում — մաքրել աղբից, ցեխից, ձնից և սառցից՝ վրաքարը, կամուրջային զլոտնները, դերանները, կապերը, գոտիների տուփերը, հենման մասերը և մետաղյա հեծանների (ֆերմա) յինթահեծանային տախ-

դաճանքը. նույնպես և փայտի կամուրջների վրա—
վրաքաշը, կամրջային գլղոնները և հեծանների: Ձթույլ
տալ ջրի լճանալը մեռադյա հեծանների (ֆերմանների)
գոտիների տուփերում և յենթահեծանային տափա-
րակներում:

6. Պահապաններով չպահպանվող կամուրջներում,
հետևել վրաքաշի և պահպանման հարմարանքների
սարքին վիճակին, և անսարքութուններ յերևան բե-
րելիս—անմիջապես հայտնել գծի բրիգադիրին:

7. Պահապաններով չպահպանվող կամուրջներում,
գարնանային ջրերի անցման սկզբին ձնից և սարու-
ցից մաքրել սանդուխտները և աստիճանները, վորոնք
չեն պահպանվում կամուրջային պահապաններով:

8. Ուշագրություն դարձնել հողե պաստառում,
չկան արդյոք ձեղքվածքներ, կամ իջվածքներ ու ջուրը
կանգ չի առնում կյուվիտներում և լեռնային արխե-
րում, մանավանդ ուժեղ անձրևներից հետո և գար-
նանը գետնի հայտն ժամանակ: Բոլոր այդպիսի վը-
նասվածքների մասին անմիջապես հաղորդել բրիգա-
դիրին, իսկ յեթև գնացքների յերթևեկման համար
վտանգ և սպասվում, այդ դեպքում պատասպարել իր
վտանգավոր տեղ (տես ներկա հատվածի 2-րդ կետը):

§ 15. Գարնանային ջրերի անցման և հեղեղների
լժամանակ գծի հսկողը պարտավոր է թիով մաքրել
կյուվիտներում, արխերում: Կիտվածքները մաքրել,
իջնել բոլոր խողովակները և կամուրջները:

Ածվածքի, կոնների և հոսանքին ուղղություն
ավող ավարտակների ջրփորում, նույնպես և ձեղք-
վածքներ, կամ շեպերում իջվածքներ հայտնարերելիս,
կամ ջրի ուժեղ հոսանքի դեպքում—անմիջապես տե-

դեկացնել գծի բրիգադիրին. գնացքների յերթևեկման
անվտանգությունը սպառնալու դեպքում—վտանգավոր
տեղը պատասպարել կանգառի ազդանշաններով:

§ 16. Գծի վրա կողմնակի առարկաներ հայտնա-
բերելիս գծի հսկողը պարտավոր է՝

ա) Հեռացնել դրանց գծի պաստառից արտաքին
ոելսից վոչ մոտիկ, քան յերկու մետր տարածության
վրա.

բ) Գնացքներից ընկած առարկաները, այնպես և
ճանապարհին գտած շարժական կազմի մասերը հանձ-
նել գծի բրիգադիրին, իսկ յեթև գծի վրա գտնվող
առարկաները հսկողն իր ուժերով չի կարող հեռացնել
այդ դեպքում նա պետք է հաղորդե գծի բրիգադիրին,
իսկ այն ժամանակ, յերբ այդ առարկաները կարող են
սպառնալ գնացքների յերթևեկության անվտանգու-
թյանը,—վտանգավոր տեղը պատասպարել կանգառի
ազդանշաններով:

§ 17. Ձմեռ ժամանակ գծի հսկողը պարտավոր է
ավելի ոելսերի կցվածքները ձյունից, փոքր դեն շը-
պլլրտելիքները մաքրել անձամբ, կամ կանչված մո-
տակա հսկողի և գծանցի պահապանի ոգնությամբ.
մեծ դեն շպլտելիքների մասին անմիջապես հաղորդել
գծի բրիգադիրին, կամ ճանապարհի վարպետին:

Ձնամաքրիչի անցնելու ժամանակ—գծից մի կող-
մը քաշվել այնքան տարածության, վորպեսզի անվը-
տանգության մեջ լինել ձնամաքրիչի կողմից թափ-
թլրվող ձնից և ձնակույտերից:

§ 18. Գծային ազդանշանների նկատմամբ գծի
հսկողը պարտավոր է.

ա) Հսկել գծի վրա բոլոր ցուցադրվող ազդանը-

շանների սարքին դրուեթյանը և հաղորդել գծի բրի-
գադիրին ազդանշանների պահանջները չկատարող բո-
լոր գնացքների մասին:

բ) Գիշեր և մառախուղոտ ժամանակն անցնելով
սեմաֆորների և սկավառակների մոտով՝ ուշադրու-
թյուն դարձնել, վորպեսզի ազդանշանի դրուեթյունը
համաձայն լինի ցույց տվող իր կրակի գույնի հետ:
Նրանց տարաձայնութան, կամ անվորոշութան դեպ-
քում—ռելսերի վրա սեմաֆորներից և սկավառակնե-
րից 1200 մետր տարածութան վրա կայարանքի (пе-
рерон) կողմը դարսել ճայթոխիներ: Ազդանշանների
սխալ ցույց տալու մասին հաղորդել կայարանի հեր-
թապահին անձամբ, կամ հարևան հսկողի, կամ սլա-
քավարի միջոցով:

գ) Ժամանակին լուսավորել սկավառակները, յեթե
այդպիսիները կան շրջուղման մեջ և նրանց լուսավո-
րելն մտցրած է գծի հսկողի պարտականությունների
մեջ:

դ) Գնացքներին հանդիպելիս—կանգնել պոստառի
կողքին, գնացքի ընթացքի աջ կողմից:

Ծանոթութիւն: Խտիվ արգելվում է նստել, կամ
պառկել գծի պոստառի վրա իճավաղային շերտի
լայնութան սահմաններում, նույնպես և անցնել գիծը
ընթացող գնացքի հենց առջևից:

յ) Գնացքի, առանձին շոգեքարշի, կամ մոտո-
գրեզինայի մոտենալու դեպքում յեղջուրով ազդանշան
տալ հետևյալ հսկողին, կամ գծանցի պահապանին և
պոստառից կողքի վրա իջնելով, պահել ազդանշան-
ների կանոններով պահանջվող ազդանշանը:

զ) Գնացքի, առանձին շոգեշարժի, կամ մոտո-

գրեզինայի անցնելուց անմիջապես հետո անցնել գծի
մեջտեղը և պահել ազդանշանների կանոններով պա-
հանջվող ազդանշանը, վորը դարձված պիտի լինի հե-
ռացող գնացքի կողմը: Այդ դեպքում առաջ պետք է
անցնել գծի մի կողմը, իսկ հետո մյուսը՝ զննելու հա-
մար, արդյոք հեռացող գնացքում ամեն ինչ սարքին
է և սեղոմն են պոչի տղանշանները: Պոչի ազդա-
նշանների բացակայութան դեպքում—խզման ազդա-
նշան տալ:

և) Ձեռքի սայլակի (գրեզինայի), կամ վագոնիկի
անցնելու ժամանակ վարվել այնպես, ինչպես և գր-
նացքի անցնելու դեպքում, բայց նրանց անցնելուց
հետո պետք է միշտ ցուցադրվի կարմիր ազդանշան,
դարձրած գրեզինայի, կամ վագոնիկի ընթացքի հա-
կառակ կողմը:

Վագոնիկի անցնելուց հետո պահել կարմիր ազ-
դանշանը մինչև վագոնիկը հետևի կողմից պասապա-
րող ազդանշան տվողի անցնելը: Յեթե վագոնիկը
գծից հանվի հետևի ազդանշան տվողի անցնելուց ա-
ռաջ, այդ դեպքում կարմիր ազդանշանը պահել միայն
մինչև վագոնիկը գծից հանելը: Ձեռքի սայլակի (գրե-
զինայի) անցնելուց հետո կարմիր ազդանշանը պահել
յերեք րոպե տևողութամբ:

ը) Յեղջուրավոր արվող ահալոչի ազդանշաննե-
րը լսելով, անմիջապես ոգնության գնալ, յեղջուրով
կրկնելով նույնպես ահալոչի ազդանշանը:

§ 19. Գծի հսկողը պարտավոր է առաջ կանգառի
ազդանշան հետևյալ դեպքերում.

ա) Յեթե անցնող գնացքում նկատվի շարժական
էադմի գնասվածք, բեռնման սխալ դրուեթյուն, հրդեհ,

մ ը նդհանրապես վորեն անսարքինություն, վորը կարող ե առաջ բերել գնացքի խորտակում, կամ ավարիս:

բ) Յեթե յերկգիծ ուղիի սխալ գծով ընթացող գնացքը չունենա սահմանված ազդանշանները:

գ) Յեթե նկատվի, վոր միայն գծով մի գնացքը գնում ե մյուսի հանգեպ: Յեթե մի գնացքը վրահաս ե լինում մյուսին, դրեզինային, կամ գծի վազոնիկին: կանգառի ազդանշանները վերջին դեպքում տրվում են միայն վրահասնող գնացքին:

դ) Յեթե նկատվի գնացքից մարդու ընկնելը:

յն) Յեթե գնացքը կանգ չառնե կանգառի ազդանշանի առաջ:

զ) Յեթե գնացքից, կամ գծից մեքենավարին տրվեն կանգառի ազդանշաններ, իսկ նա գնացքը չը կանգնեցնե:

կ) Յեթե հայտնաբերվի գծի փչացումն, կամ վալուսն, գնացքների յերթեկեկության համար կառուցվածքների վտանգավոր փչացում:

ը) Սրտուղման շերտում յերկաթուղու յերթեկեկմանը, կամ գուլքին սպառնող հրդեհի դեպքում:

ժ) Իր հայացողությամբ, իր պատասխանատվության տակ—ուրիշ դեպքերում, վորոնք սպառնում են յերթեկեկության անվտանգությանը և մարդկանց:

§ 20. Գնացքը անցնելիս գծի հսկողը պարտավոր ե հետևելու գնացքային բրիգադի կողմից տրվող ազդանշաններին և միջոցներ ձեռք առնել նրանք հաղորդելու մեքենավարին:

§ 21. Նկատելով առանց շոգեքարշի գնացող վագոններ գծի հսկողը պարտավոր ե միջոցներ ձեռք առ


նել անձամբ, կամ ընդհանուր ահակոչի ազդանշանով կանչված ուրիշ հսկողների և բանվորների ոգնությամբ, վագոնները կանգնեցնել, արգելակել նրանց և պատասպարել նրանց կանգառման ազդանշաններով: Այդ բանն անելը հնարավոր չլինելու դեպքում յեղջյուրով ալ ընդհանուր ահակոչի ազդանշան հեռացող վագոնների կողմը:

§ 22. Գնացքը, շոգեքարժը, կամ մոտողրեզինան կայարանքում (перестан) կանգառման դեպքում, գծի հսկողը պարտավոր ե անմիջապես ներկայանալ զխավոր կոնդուկտորի, կամ նրան փոխարինող անձի տրամադրության տակ:

Յեթե գնացքի խորտակման ժամանակ և նրանում վոշ-վոք չլինի, գնացքի կամ շոգեքարշի բրիգադից, վորոնք կարողանան ցուցմունքներ տալ գծի հսկողին, այդ դեպքում գնացքը պետք ե պատասպարել համաձայն ազդանշանների կանոնների և անմիջապես պատահածի մասին հաղորդել մոտակա կայարանին և գծի բրիգադիին:

§ 23. Գծի հսկողը պարտավոր ե հսկել հեռազրային գծի զրությանը և լարերի կտրման, նրանց միացման, առանձնիչներից անջատման և կախվելու, սյուների կտրելու, կամ թեքվելու դեպքերում—այդ մասին հաղորդել անմիջապես գծի բրիգադիին և ազդանշանների ու կապի սպասարկման աշխատողներին անձամբ, կամ ուրիշ անձանց միջոցով:

§ 24. Գծի ելեքտրականացրած ուղեմասում, ոչխատող հսկողը պարտավոր ե հետևել կցվածքային,



ուղեմիջային ու ռելսամիջային միացումների և գետնածնների սարքերն դրուելունը և կատարել ելեքտրականացման հորինվածքների արտաքին զննում:

Շոշափման (կոնսակտի) ցանցում անսարքութուն հայտնաբերելիս, (լարերում և կայմերում) վորը վտանգավոր և գնացքների յերթևեկության համար, անմիջապես այդ տեղը պատասպարել կանգառի ազդանշաններով, իսկ լարի կտրման դեպքում, բացի դրանից, միջոցներ ձեռք առնել, վորպեսզի վոչ-վոք չմոտենա ընկած լարին և ինքը վոչ մի դեպքում չքսվի նրան (վտանգավոր և կյանքի համար): Շոշափման ցանցի և կցվածքների միացումների հայտնաբերված փչացումների բոլոր դեպքերի մասին հաղորդել զծի բրիգադիրին, շոշափման ցանցի հերթապահ մոնտյորին և մոտակա կայարանի հերթապահին:

§ 25. Ուղեմասն ինքնաուղեկապումով (ավտորլուկիրովկա) սարքավորելու դեպքում զծի հսկողը պարտավոր և կատարել ինքնաուղեկապման հորինվածքների արտաքին զննութունը և հաղորդել բրիգադիրին, կամ ճանապարհի վարպետին նկատած վնասվածքների մասին:

§ 26. Հակահրդեհային միջոցառումների նկատմամբ զծի հսկողը պարտավոր և.

ա) Հետևել, վորպեսզի հեշտ վառվող առարկաները, վորոնք պատկանում են կողմնակի անձանց և հիմնարկներին, զծից հեռացրած լինեն արտուղման սահմանից վոչ մոտիկ, քան 20 մետր հեռավորության վրա: Բոլոր խախտումների մասին հաղորդել զծի բրիգադիրին:

բ) Յերկաթուղում, կամ գծին հակվող անտառային մասերում հրդեհ առաջանալու դեպքում ձեռք առնել բոլոր նրանից կախված միջոցները նրա լիկվիդացիայի համար: Առանց կողմնակի ոգնության հրդեհը լիկվիդացիայի յենթարկելն անկարող լինելու դեպքում— անմիջապես պահանջել ոգնության գալ մոտակա և հերթապահութունից ազատ հսկողներին, տալ հրեհային անակոչի ազդանշան, նույնպես— և տեղեկացնել զծի բրիգադիրին: Յեթե հրդեհն սպառնում և զնացքների յերթևեկության անվտանգությանը, այդ տեղ պատասպարել կանգառի ազդանշաններով:

գ) Թույլ չտալ արտուղման շերտում կրակ անելը, բայց յեթե այդ պահանջվում են աշխատանքի աշխատանքին մասնակից վորևե անձի հսկողության տակ: Չթույլատրել կրակ անել կամուրջների շեքերի մոտ, կապի լարերի տակ, անտառային նյութերի պահեստների մոտ և այլն:

§ 27. Գծի հսկողը պարտավոր և.

ա) Հսկել զծի պատկանելիքների պահպանմանը և թույլ չտալ վնասելու և գողանալու կիրոմետրային, սահմանազլխային և ուրիշ նշանները, ձնարգելները, արտուղման շերտում դարակած նյութեղենները և ընդհանրապես ամեն տեսակ յերկաթուղային գույքը:

բ) Հատուկ ուշադրութուն դարձնել, արդոք պատրաստութուններ չեն կատարվում զծի պատկանելիքները գողանալու, կամ փչանալու համար, նույնպես և զիժը փակելու համար: Այդպիսի պատրաստություններ հայտնաբերելիս միջոցներ ձեռք առնել նախագրուշացնելու վոճրագործութունը և քոնելու չա-

բագործներին, կամ նրանց հետևելով և նրանց անձնավորութիւնը ճանաչելով, այդ մասին հաղորդել գծի բրիգադիրին և ներքին գործ. կոմիսարիատի պետական անվտանգութեան գլխավոր կառավարչութեան լիազորին (Պ. Ա. Գ. Կ.):

գ) Թույլ չտալ լուսանկարելիս և պլաններ քաշելու արտուղման շերտի սահմաններում առանց դրա համար համապատասխան թույլտվութեան:

դ) Թույլ չտալ կեղտոտացնելու արտուղման շերտը, ջրհորները և ջրամատակարարման աղբյուրները:

§ 28. Գծի հսկողը պարտավոր է՝

ա) Թույլ չտալ յերկաթուղային գծով և կամուրջներով սահմանված անցաթիղթեր չունեցող անձանց անցնել:

բ) Թույլ չտալ գծերով անցնել սայլերին, անասուններ քշել, նույնպես և վորևե առարկաներ քարշելով տեղափոխել այն տեղերում, վորտեղ դրա համար գծանցներ չէ շինված:

գ) Թույլ չտալ արտուղման շերտում պաշտպանող ծառատունկերը փչացնել կամ վռնչացնել, կյոսկետներ աղբոտել, հեռագրային սյուների առանձնիչները ջարդել վրայի քարեր, փայտեր և ուրիշ առարկաներ գցել անցնող գնացքների վրա:

դ) Գծի բրիգադիրին հայտնել այն անձանց մասին, վորոնք առանց յերկաթուղային վարչութեան թույլտվութեան արածացնում են անասուններին արտուղման շերտի սահմաններում:

§ 29. Յեթե գծի վրա, կամ արտուղման շերտի սահմաններում հայտնաբերվի մարդու դիակ, գծի հրակողը պետք է այդ մասին հաղորդէ գծի բրիգադիրին,

կամ մոտակա կայարանին և մինչև իշխանութիւնների ժամանակը պարտավոր է՝

ա) Յեթե դիակը կարող է ֆլասովել անցնող գնացքների կողմից—տեղափոխել նրան գծի կողքի վրա ըստ հնարավորութեան չափ չփոխել նրա դրութիւնը:

բ) Վոչ վոքի Թույլ չտալ մոտենալու դիակին:

գ) Բոլորը միջոցներ ձեռք առնել արյան հետքերը պահելու համար:

§ 30. Գծին կողմնակի անձանց նկատմամ, գծի հսկողը պարտավոր է համառութեամբ և հաստատակամութեամբ, բայց քաղաքավարի պահանջել գծում սահմանված կարգ պահպանելու կանոնների կատարումը Թույլ տալով գծի աշխատանքի մեջ խառնվելու: Գիմագրութեան դեպքում—դիմել ներքին գործերի կոմիսարիատի պետական անվտանգութեան գլխավոր կառավարչութեան լիազորի (Պ. Ա. Գ. Կ.) և յերկաթուղային պահակի աջակցութեանը: Նման դեպքերի մասին ղեկուցել գծի բրիգադիրին:

§ 31. Առանց բրիգադիրի թույլտվութեան գծի հսկողն իրավունք չունի գծի շրջագայումը ընդհատել իր անձնական կարիքների համար:

§ 32. Հիվանդութեան կամ իր պարտականութիւնները վորևե պատճառով կատարելու անկարողութեան դեպքում, գծի հսկողը պետք է անմիջապէս դրա մասին տեղեկացնէ գծի բրիգադիրին:

§ 33. Գծի հսկողի հանգստի որերը սահմանվում են հաստատված դիստանցիայի պետի կողմից հատուկ գրաֆիկով:

§ 34. Արձակուրդի, հանգստի օրերի և հիվանդութեան ժամանակ զծի հսկողը պետք է իր պարտականութիւնները կատարումը հանձնէ զծի բրիգադիրի կողմից նշանակած ուրիշ անձի:

III. ՊԱՏԱՍԻԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

§ 35. Անգործունեութեան պարտականութիւնների սխալ և վոչ լրիվ կատարման համար, զծի հսկողը պատասխանատու յե յերկաթուղային տրանսպորտի բանվորների և ծառայողների ղիսցիպլինար կանոնադրութեան համաձայն և դատական կարգով:

Գծի և կառուցվածքների կենտրոնական կառավարչութեան զծի սեկտորի պետ՝
Ն. ՄՈՒՐԱՇԿԻՆ

ԳՄԻ ՀՍԿՈՂԻ ՀԲԱՋԱՆԳԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ

Հաստատում եմ.
ԿՅԻ և Կառուցվածքների
Կենտրոնական Կառավար-
չության պետի ժամանա-
կավոր պաշտոնակատար՝
ԿՅՈՒՆԵՐ

26-ն գեկեմբերի 1934 թ.

ԳՄԻ ՀՍԿՈՂԻ ՀՐԱՋԱՆԳԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ

Յերկաթուղային գիծը բաղկացած է յերկու հիմ-
նական մասերից. 1) ներքևի և 2) վերևի կազմը:

Ներքևի կազմին վերաբերվում են. ա) հողե պաս-
տառը, բ) հողե պաստառի ամրացումները, գ) արհես-
տական կառուցվածքները:

Շենքի վերևի կազմին վերաբերվում են. ա) խճա-
վազային շերտը, բ) շպալները, գ) ռելսերը, դ) պնդա-
ցումները, յե) հակախաղացքները, զ) սլաքային ուղե-
փոխները, ե) կամրջային գլխոնները:

Ներքին կազմը

Յերկաթուղային գիծ անցկացնելիս հողի մակե-
րեսը հարթվում է: Մի քանի տեղերում հողն ածվում
է (насыпь) ածվածք կազմելու համար, ուրիշ տեղե-
րում հողը հանվում է փորոք (выемка) կազմելու հա-
մար:

Հողի պաստառի կողքերին փորոքներում ջուրը հեռացնելու համար անց են կացվում արխեր, վորոնք կոչվում են կյուվերներ (նկար 1):


Փորոքներ շինելիս նրանցից հանված հողը դործ են անում լիրեր բարձրացնելու համար (նկար 2):

Յեթե հանվող հողն անվաճքի համար անպետք է, կամ հեռավորության պատճառով անվաճքի համար տանելը ձեռնտու չէ, այդ դեպքում փորոքից հանված հողը կատարվում է նրա կողքերին, վորպես, յերկար հողապատնեշ, վորը կոչվում է ամբարտակ (կավայեր) (նկար 3):



Նկար 1.

Հողի խորացումները, վորոնք դասավորված են անվաճքների յերկարությամբ, վորտեղից վերցրած է



Նկար 2.

հողը նրան կազմելու համար, կոչվում է հողապատնեշներ (Ռեզերվներ) (նկար 2):

Հողապատնեշների հատակը միշտ շինվում է թեք, վորպեսզի նրանց մեջ ջուրը չկանգնի և անվաճքների տակից չթրջի:

Յեթե հողի պաստառը շինվում է սարալանջի յերկարությամբ, այդ դեպքում սարալանջով պաստառի յերկարության ուղղությամբ արխ է փորվում, վորը կոչվում է լեռնային (նկար 1): Այս արխը կաշնում է սարալանջով հոսող ջուրը և թույլ չի տալիս նրան հասնելու հողի պաստառին: Այն գիծը, վորը բաժանում է հողի պաստառի վերևի մասը լիրի, կամ կյուվետի շեղից (ՕՏՈՑ), կոչվում է հողի պաստառի առը, իսկ առի և խճավազի խավի ներքևի ծայրի մեջ կազմված շավիղը կամ շերտը կոչվում է կողքենի (ՕԲՈՇԻՆԱ) (նկար 4):



Նկար 3.

Վորովհետև հողի պաստառի անսարքությունների մեծամասնության հիմնական պատճառը հանդիսանում է նրա ջրով հագեցումը, ուստի ըստ արխերը, կյուվետները, հողապատնեշները պետք է միշտ մաքրված լինեն և ունենան անհրաժեշտ թեքվածք, վորպեսզի ջուրը լավ հեռացվեն:

Կյուվետների մաքրումը պետք է սկսել ավելի ցածր տեղից, հետդետև առաջ շարժվելով դեպի վեր-

յեւր, վորպեսզի արագացնել ջրի բացթողնելը: Կյու-
վեաները, կամ արխերը մաքրելիս հանվող հողը չը-
թողնել շեպի վրա, այլ իսկույնյեւտ տանել:



Նկար 4.

Վորպեսզի հողն պաստառը և շեպերը չթրջվեն
և շուտ չորանան, կողքիները և առերը պահանջված
տեղերում ճեղքվում են վոչ խորը և վոչ նեղ արխե-
րով, վորոնք լցվում են մաքուր ավազով:

Թույլ կամ խոնավ հողով փորոքների շեպերում
այդպիսի ճեղքեր արվում են յուրաքանչյուր 20 մետ-
րից հետո:

Նրանցով ջուրը հոսում և շեպի վերևից, չորաց-
նելով նրան և լցվում և կյուսկերի, կամ ջրահեռաց
արխի մեջ:



Նկար 5.

Յեթն փորոքի, կամ լիբի շեպն իջավ, բայց գիծը
չի կաշկառից, այլ միայն լցրեց կյուսկերը, վերջինը
հարկավոր և անմիջապես մաքրել:

Իսկ յեթն իջվածքը կաշկառեց գիծը, այդ գեպ-
քում գծի հսկողը պարտավոր և իջվածքի տեղը պա-
տապարվել կանգառի ազդանշաններով, դրա մասին
շտապ տեղեկացնել գծի բերկադիրին և ճանապարհի
վարպետին ու իջվածքի տեղի մոտ սպասել գծի բեր-
կադիրի, կամ ճանապարհի վարպետի հետ բանվորնե-
րի բերկադայի գալուն:


Շեպերից անհրաժեշտ և խոտը քաղել, վորովհե-
տև նա խանգարում և ջրի ազատ հոսանքին: Թույլ և
թափվող հող ունեցող շեպերը ծածկվում են ճիմով,
վորն ամրացվում և շեպին փայտե բրիկներով:



Նկար 6.

Պաստառի մեջ հավաքված ջուրը կարող և առաջ
բերել նրա հետևյալ մասավածքները՝

ա) Ածվածքի շեպի փլվածք, կամ իջվածք (նկ. 5).




Նկար 7.

բ) Ածվածքի ցածր մասի իջնելը (նկ. 6).


գ) Փորոքի շեպի իջվածք (նկ. 7 և

դ) Փորոքի շեպի իջվածք (նկ. 8):

Իջվածքից կամ ջրատարումից շեպի պաշտպանումն ուժեղացնելու համար—յերբեմն նրան ամրացնում են քարով (նկ. 9 և 10):



Նկար 8.



Նկար 9.



Նկար 10.

Արհեստակցական կառուցվածքներ

Նրա համար, վորպեսզի յերկաթուղային պաստառի անվաքը չփակե գետի, գետակի հոսանքը, կամ ջրի ուրիշ անցքը, կառուցվում են կամուրջներ, կամ խողովակներ, վորոնք կոչվում են արհեստական կառուցվածքներ:

Բացի կամուրջներից և խողովակներից, յերբեմն շինում են նաև որրիշ արհեստական կառուցվածքներ, որինակ. տունելներ, ուղանցքներ, ետակաղներ, դիմհար պատեր, նովեր (ЛОТКИ) և այլն:

Տունել կոչվում է գետնի տակի անցքը, վորը կառուցվում է գնացքներ անցկացնելու համար:


Ուղանցք կոչվում է կամրջի ձևով կառուցվածքը, վորը ծառայում է իր վրայով յերկաթուղային, կամ սովորական գիծ անցկացնելու համար շինված է ուրիշ գծերի կամ փողոցի վրայով:

Ետակաղա կոչվում է կամրջի ձևով կառուցվածքը, վորը սարքվում է հողի անվաքի վտխարեն լեռնային կամ անհարթ տեղերում, վորտեղ շատ բարձր հողի անվաքը բարձրացնելը ձեռնտու չի լինի, ու յերբեմն ել և անհնարին կլինի:

Բարձր անվաքներում ջուրն անցկացնելու համար շինվում են խողովակներ, վորոնք լինում են յերկաթ-բետոնե, բետոնե, քարե, թուջի, յերկաթե և փայտե:

Կամուրջները, ետակաղները և ուղանցքները շինվում են մետաղից, փայտից, փայտից և յերկաթ-բետոնից:

Կամուրջներն ունեն հետևյալ գլխավոր բաղադրյալ մասեր՝ ա) հենարաններ, բ) արանքային շինվածք (ֆերմեր), գ) բանուկ մաս (նկ. 11):



Նկար 11.

Վ Ե Ր Ի Ն Կ Ա Ջ Մ Ը

Խնավազ (баласт)

Յեթե շալաները և ուղիները դարսել ուղղի հողի պատաստի վրա, այդ դեպքում անցնող գնացքներն այսպիսի գիծը կճխտելին հողի մեջ, մանավանդ, յեթե նա խոնավ և: Վորպեսզի նման բան չլինի, հողի պատաստի վերևից լցնում են լավ ավաղի, խճի, կամ քարե քոնճի խավ: Այդ խավը կոչվում է բալաստային խավ:

Բալաստը պետք է լինի այնպիսին, վորպեսզի ջուրը լավ կարողանա իր միջով անցկացնել և քամուց ցիր ու ցան չլինի: Լավագույն բալաստ համարվում է պինդ ցեղի քարից ստացված քոնճը, հետո գալիս են խիճը և խոշոր ավաղը:

Բալաստը չպետք է կեղտոտված լինի խոտով, աղբով և տակով, վորովհետև կեղտոտված բալաստն իր միջից չի անցկացնում ջուրը, վորը կանգ և առնում շալաների տակ, նոսրացնում է հողի պատաստը և գընացքների անցնելիս գուրս և ցայտում ցեխի հետ (ցայթուկներ):

Իրանից դենը փչանում և, դառնում է անկայուն և նույն իսկ կարող է վտանգավոր լինել գնացքների յերթեկույթյան համար:

Ուստի գծի հսկողի մշտական հոգսը պետք է լինի. խոտի ժամանակին քաղհանը ճանապարհի վարպետի կողմից ցատկած տարածույթյան վրա, վորի արմատները կեղտոտացնում են բալաստը, բալաստային խավի մակերեսի շտկոցը, բալաստի վրա հավաքված ջրի հեռացնելը, վորողված տեղերի պնդացնելը բալաստի ավելի ուսերի թաթից և տակգիրներից պընդացուների գննման համար:

Ավաբլուկացրած ուղիմասերում ուղիի թաթի հասակի և բալաստի վերևի մակերեսի մեջ պետք է լինի տղատ բացար 30 միլլիմետրից վոչ պակաս, և կեկտրական հոսանքը պետնի մեջ վաթածքից խուսափելու համար:

Թույլ գետիններում հողի պատաստը և բալաստային խավի պակաս հաստույթյան դեպքում— գնացքների ծանրույթյան տակ շալաները բալաստին ճխտում են հողի մեջ և պատաստի մեջտեղն իջնում և, վորից հողի պատաստն ներսում գոյանում են այսպես կոչված բալաստային տաշտակներ (նկար 12): Այդպիսի տաշտակներում ջուրը կանգ է առնում, վորն ամառը թըր-

Չում ու փչացնում է հողի պաստառը, իսկ ձմեռը, սառ-
չելով կազմում է ուռուցքներ:



Նկար 12:

Ուռուցքներ

Ուռուցքներ կոչվում են յերկաթուղային գծի մի
քանի տեղերում բարձրացած թուփերը, վորոնք առա-
ջացել են ջրի սառչելուց, և գտնվում և բալաստային
խավի և հողի պաստառի մեջ: Ուռուցքները բաժան-
վում են վերին և արմատական:

Վերին ուռուցքները կազմվում են բալաստային
աաշտակներում ամառային և աշնանային անձրևներից
հավաքված ջրերի սառչելուց:

Հիմնական ուռուցքները կազմվում են ջրի սառ-
չելու հետևանքով, գետնի տակի ջրունակ շերտերից
հոսող ջրերի սառչելուց:

Բալաստային խավի և հողի պաստառի հետզհետե
դեպի խորութունը սառչելուց, ուռուցքները դեպի
բարձրությանը մեծանում են կամ ինչպես ասում են.
«անում են»: Ուռուցքները սովորաբար գոյանում են
առաջին ուժեղ սառնամանիքներից հետո, իսկ սկսում
«նստել» գարնանային ձնահալքների ժամանակ: Ու-
ռուցքները սկսվում են ուղի ուռուցքներից դառնում են
ալիքաձև, գոյանում են հրոցներ և թեքվածքներ, վո-

րոնք զնացքներին տալիս են անհանգիստ յերթ և
սպառնում են յերթեկեկության անվտանգությանը: Ու-
ժեղ հրոցների դեպքում հնարավոր են սեյսմիկ, կամ
շարժական կազմի առանցքների բեկվածքներ և վեր-
ջինի գուրս ընկնելը սեյսմիկից:

Գիծն ուռած տեղերում սարքի բերելու համար
ուռուցքի սապատը սահուն կերպով տարվում է յերկու
կողմը, այդ աշխատանքը կատարվում է փայտյա ու-
ռուցքային տակդիրների ոգնությամբ: Ուռուցքային
տակդիրները մինչև 10 միլիմետր հաստությամբ, 150
միլիմետր լայնությամբ և նույնչափ յերկարությամբ,
ինչպես և դժային տակդիրները, կոչվում են քարտեր:
Մինչև 50 միլիմետր հաստությամբ, 300 միլիմետր
յերկարությամբ և 150 միլիմետր լայնությամբ տակ-
դիրները, նույնպես և մինչև 90 միլիմետր հաստու-
թյամբ, 400 միլիմետր յերկարությամբ և 150 միլի-
մետր լայնությամբ տակդիրները—կոչվում են կարճ
շպալավրադիրներ և, վերջապես, մինչև 130 միլիմետր
հաստությամբ, 2400 միլիմետր յերկարությամբ, 150
միլիմետր լայնությամբ տակդիրները—կոչվում են մի-
ջանցիկ շպալավրադիրներ:

Գիծը ուռուցքներից նորոգելիս սեյսմիկի գամ-
կապման համար դործ են անվում թե նորմալ գամեր
(կոստիլներ), և թե յերկարացրած մինչև 205 միլիմետր,
մեկ և կեսանոց—մինչև 230 միլիմետր, կրկնակի—
մինչև 255 ու 280 միլիմետր և հատուկ գամեր առանձ-
նապես բարձր ուռուցքների համար:

Բոլոր ուռուցքային տակդիրները քիփ հարմարեց-
վում են շպալներին կոստիլները պինդ վարակվում են:
Տակդիրները չպետք է ունենան ճեղքվածքներ և կո-
տրվածքներ:

Ուսուցիչներին հետզհետե նստելուց բոլոր ուսուցիչներին տակդիրները հանվում և սահվում են:

Ձմեռվա աշխատանքների ժամանակ գծի հսկողը պետք է հետևի բոլոր այն տեղերին, վորտեղ ուսուցիչներ կազմվում, ուշադրութեամբ դնեն այդ տեղերը և ուսուցիչներ յերևալու մասին անմիջապես տեղեկացնեն գծի բրիգադիրին: Այն դեպքում, յերբ հնարավոր չըլինի գնացքը անցթողնել ուսած տեղով, գծի հսկողը մինչև գիծը սարքի բերելը պետք է ճանապարհը պատասպտուե կանգառի ազդանշաններով:

Շ ա պ ա լ ն ե ր

Շապալների նշանակումը. ա) ռելսերի համար, ծառայել, վորպես հենարան, բ) շարժական կազմի քաշը բաժանել վորքան հնարավոր է բալաստի մեծ բակերեսի վրա և գ) կապել ռելսային ծիրի յերկու թելերը գծի մշտական լայնութունը պահպանելու համար:

ԽՍՀՄ-ի գծերում դարձում են փայտե շապալներ առավելապես շամից և յեղևնիից. գործադրվում են նաև կաշնայ, հաճարից և խիժուտ փելհուց շապալներ:

Գծերի կարեւորութունից և յերթեկեկման չափերից կախված—զանազան տիպի շապալներ են դրվում, մեզ մոտ պատրաստվող շապալների չափը (ստանդարտը) ցույց է տված նկար 13-ի վրա:

Ռելսային կցվածքի տակ դառնվող շապալները կոչվում են կցվածքային: Այդ շապալները կախված կըցվածքի դեպքում արվում են նրանց մեջտեղների (առանցքների) մեջ 50 սանտիմետրի տարածութեան վը-

բա: Շապալները, վորոնք դառնվում են ողակի մնացած ամբողջ տարածութեան վրա, կոչվում են միջանկյալ:

Գծում դարսված չտողրված շամի շապալի ծառայութեան միջին ժամկետը—հասնում է մինչև 6 տարու, իսկ յեղիներինը՝ մինչև 4 և կես տարու: Յեթե շապալները հատուկ բաղադրութեաններով տողրել (կրեոզիտի խառնուրդը մազութի հետ, կինոզիտ, քլոր-ցինկ), վորոնք նախապահպանում են նրանց վաղաժամ փթելուց, այդ դեպքում նրանց ծառայութեան ժամկետը յերկարացվում է մինչև 15 և նույնիսկ ավելի տարեների:


Շապալի նորմալ յերկարութունը հավասար է 2 մետր 70 սանտիմետրի:

Գծի հսկողը գծի գննումների ժամանակ պարտավոր է մանրակրկիտ կերպով հսկել շապալների դրութեանը՝ նրանց մեջ չկան արդյոք փտած, կոտրված շապալներ, վերև ցցված ծայրերով, խորը յերկայնքսի ձեղքերով, վորոնց մեջ կոստիլը չի պահվում: Բոլորն այդպիսի շապալները գծի հսկողը պետք է նշանակի և նրանց մասին հաղորդվի գծի բրիգադիրին:

Գծի հսկողը պետք է նույնպես հսկե՝ չկան արդյոք գծում շապալներ, վորոնք տեղափոխվել իրենց դարսված տեղից և բոլոր այդպիսի շապալների մասին անմիջապես հաղորդել գծի բրիգադիրին:

Փթած շապալները հեշտ են վորոշվում լիզի բուլթ ծայրի հարվածով, կամ կտցնի կոթառով: Առողջ շապալը հարվածն իս տալիս է մաքուր, պարզ, հնչուն, իսկ փթածը—թուլ և խուլ: Գծի հսկողը հատուկ ուշադրութուն պետք է դարձնի շապալի այն մասի վրա, վորը դառնվում է ռելսի տակ, վորովհետև ամենից հա-

ճախ շպալները կոտրվում են հենց այդ մասում: Ուղեմիջում շպալներ դարսելն արգելվում է: Նրանք պետք



Նկար 13.

և պահվեն առանձին կուտակներում (штабеля) յուրաքանչյուրում 50 և 100 հատ:

Չողորմած շպալները լավ չորացման և հողմահարման համար կատակներում չպետք է դարսվեն ի-

րար մոտ: Տողորմած շպալները դարսակվում են իրար մոտիկ:

Շպալները խոնավությունից պահպանելու համար կուտակի շուրջն արիներ են փորվում, վորոնք ջուրը հեռացնում են կուտակներից: Շպալները բոցավառվելուց պահպանելու համար կուտակների շուրջի խոտը պետք է քաղել և թույլ չտալ աղբոտելու:

Կցվածքներ


Ռելսային գծի այն տեղերը, վորտեղ ուղանների ծայրերն իրար հետ միանում են, կոչվում են կցվածքներ: Ռելսային կցվածքները գծում սովորաբար տեղավորվում են յերկու շպալների արանքում, այսինքն «կախված դրությամբ» (նկ. 14) բայց 1935 թվից ցանցի յերկաթուղիներում մտցրվում է նոր կցվածք կրկնակի շպալների վրա, վորը ցույց է արված 15-րդ նկարում:

Շոգից ուղանները յերկարանում են, իսկ ցրտից կարճանում: Վորպեսզի շոգի ժամանակ յերկարացած




Նկար 14.

ուղանների ծայրերն իրար չմոտենան ու պիժը մի կողմ չծռեն, ուղանների ծայրերի արանքում անցք, կամ «արանք» է թողնվում: Նորմալ արանքների մեծու-



Կծվածքային տակդիր




Յերկարչավոր տակդիր




Կերավոր
բալո



Կ և Ե



Դիմնարի մեղքիք



Նկար 15

Թյունը յուրաքանչյուր յերկաթուղում սահմանվում է գծի սպասարկման պետի կարգադրությամբ:

Յեթե կցվածքներում արանքները փոքրացրել, կամ նրանք բոլորովին վերացրել են, այսինքն սկսելի ծայրերում իրար մոտեցել են—պետք է կատարել արանքների բացատրումն: Անկանոն արանքների մասին գծի հսկողը պետք է հաղորդե գծի բրիգադիրին:

Ռ ե լ ս ե ր


Ռելսերը պատրաստվում են պողպատից: ԽՄՀՄ սահմանված են սկսերի վեց հիմնական տիպեր՝ մետակ մետրում 44 կիլոգրամ, տիպը I-ա, մետակ մետրում 40 կիլոգրամ, տիպ II-ա, III-ա և IV-ա, վորնք կոչվում են նորմալ (նկ. 16):

Նորմալ տիպի սկսերի հիմնական չափերը ցույց են տված ստորև բերված աղյուսակում:

Ռելսի տիպը	Մեկ մետակ մետր սկսի քաշը կիլոգրամներով	Ստորոտի լայնությունը	Ռելսի բարձրությունը
		Միլիմետրներով	
44	44,00	114	144,5
I-ա	43,57	125	140,0
40	40,00	114	137,5
II-ա	38,40	114	135,0
III-ա	33,40	110	128,0
IV-ա	30,89	110	120,5

Ռելսների նորմալ յերկարությունը տասներկու է կես մետր է: Գծի վորոտումներում դարսվում են նորմալ սկսերից 4 կամ սանտիմետր կարճ սկսեր:

I-ա, II-ա, 44 և 40 կիլոգրամ մեկ մետակ մետրում տիպի սկսերը, իբրև ավելի ուժեղ, դարսվում



Նկար 16

են մեծ յերթեկության ծանր շոգեշարժներ և մեծ արագություններ ունեցող յերկաթուղիներում: III-ա տիպի սկսերը դարսված են մեծամասնությամբ ցանցի մնացած յերկաթուղիներում և IV-ա տիպի սկսերը դարսվում են յերկրորդական նշանակություն ունեցող յերկաթուղիներում և ճյուղերում: Ցանցի յերկաթուղիներում մինչև հիմա կան դեռևս հին պատրաստած սկսեր և ավելի թույլ տիպի, քան IV-ա:

Ռելսի մակերեսը պետք է լինի հարթ և չպետք է ունենա պատռվածքներ և ճեղքվածքներ:

Գծում պայթած սկսերը փոխելու համար—յուրաքանչյուր կիրումետրի վրա, հատուկ խաչկապների

վրա, կազարմայի, կամ բուսկայի մոտ պետք է պահ-
վեն նույն տիպի և նույն յերկարության ինչպիսին
դարսված են գծում յերկու հատից վոչ պակաս ուի-
սեր: Այդ ուիսերն են կիլոմետրային պաշար:

Յեթն ուիսի բեկվածքը կատարվել է շպալի վրա,
գծի հսկողը պետք է սկզբում այդ տեղը պատասպարե
կանգառի ազդանշաններով, հետո մինչև փոխելը ուի-
սի յերկու թայթած ծայրերը կոստիլներով գամկապե
և դանդաղ ընթացքով անցթողնե գնացքը, նախորդ
մեքենավարին ցույց տալով բեկվածքի տեղը և հա-
ղորդե պայթած ուիսի մասին գծի բրիգադիրին:

Յեթն բեկվածքը կատարվել է շպալների արան-
քում (կախված դրությամբ), այդ դեպքում գծի հսկո-
ղը պետք է այդ տեղը պատրաստե կանգառի ազդա-
նշաններով, յեղջուրով ոգնության կանչե և տեղե-
կացնե գծի բրիգադիրին: Գծի բրիգադիրի ժամանե-
լուց հետո բեկվածքի տեղի տակ անց է կացվում շպա-
լի կտոր, կամ ամբողջ շպալ և շաբոնի չափով ուիսի
յերկու պայթած ծայրերը կոստիլներով գամկապում
են շպալներին: Պայթած ուիսը պետք է փոխվի նույն
որն յեվետ, իսկ մինչև փոխելն այդ տեղը պետք է
պատասպարված լինի կանգառի ազդանշաններով:

Տակդիրներ

Ռեյսի և շպալի արանքում դարսում են տակդիր-
ներ:

Տակդիրները դործադրվում են շպալները ուիսից
կտրվելուց պահպանելու և անցնող գնացքների ազդե-
ցության տակ դոյածող ուիսերի կողքից տեղաշարժու-
թյունից խուսափելու համար: Տակդիրները լինում են

տափակ և սեպավոր: Ամենից շատ տարածված տիպի
տակդիր հանդիսանում ն յեռձականի սեպավորը:

Տակդիրները չպետք է շատ կերված լինեն ժան-
պից, ճեղքվածքներ և ուրիշ առատներ պիտի չունենան:
Շատ մաշված, կամ պայթած տակդիրներ հայտնաբե-
րելիս գծի հսկողը պարտավոր է անմիջապես հաղոր-
դել այդ մասին գծի բրիգադիրին:

Ցանցի յերկաթուղիներում ներկայումս մտցրվում
է նոր տիպի տակդիր, վորն ամրացվում է շպալին
վինտով (շուռուպով) վոչ թե ուիսի հետ միասին, այլ
առանձին՝ ուիսն ամրացվում է տակդիրին նույնպես
առանձին կեռավոր բոլտերով (նկ. 15): Պնդացման
այդպիսի տիպը կոչվում է անջատվող:

Կ ո ս տ ի լ ն ե ր


Ռեյսի շպալներին կպցնելու համար դործա-
վում են կոստիլներ: Նրանք լինում են սովորական
(նկ. 17) և ուռուցքային, վորոնք ավելի սովորական-
ներից յերկար են:

Կոստիլները չպետք է ունենան կեռքաններ և
ճեղքվածքներ: Մեկ տակդիրում զանազան տիպի կոս-
տիլներ արգելվում է:

Կոստիլները պետք է ցցել ուղղահայ և իրենց մի-
կողքով և գլխիկով պետք է քիփ կպչեն ուիսի ստո-
րտը:

Այդ դեպքում, յերբ ուիսը շպալին ամրացվում է
յերկու կոստիլներով առանց տակդիրի, կոստիլները
պետք է ցցված լինեն վոչ թե իրար դիմաց, մի քիչ
շեղակի, վոր շպալները ճեղքվելուց խուսափել:

Կոստիլը հին ծակի միջ ցցելուց առաջ, պետք է նրա մեջ նախապես ցցել փայտե խեժած թիթեղ—պնդակ:



Նկ. 17. Չափերը միլիմետրերով:

Յեթե տակդիրները, կամ ուսերը շղայններին ամբողջովում են վիճուով (շառապով), վերջինները ցցել արգելվում է. (նրանց հարկավոր է պտտել բանալիններով): Կոստիլները և բոլոր պնդացուսները: Ինչպես բոլորները, մակադիրները, տակդիրները, — պետք է պահել արկղներում, կամ տակառներում կաղմարմաններին, կամ կիսակաղմարմաններին կից նկուղներում, կամ ծայրահեղ դեպքում, բակում չարդախի տակ:

Մակադիրներ

Ուսերի յերկու ծայրերը բոլորով միացնելու համար գործադրվում են մակադիրներ: Նրանք լինում են տափակ, անկյունավոր, գոգնոցավոր և փոխացման:

Կանոնավոր աշխատելու համար մակադիրը պետք է քիփ կայցրած լինի ուսին, վորի համար բոլորները պետք է պինդ ձգված լինեն:

Մեր յերկաթուղիներում նորմալ տիպի ուսերի համար զծային մակադիրների ամենից շատ տարածված տիպը հանդիսանում է վեց ծականի գոգնացավոր մակադիրները (նկ. 14):

1935 թվից մտցվում է մակադիրների նոր ստանդարտային տիպ, վորը ցույց է տված 15-րդ նկարում:

Փոխանցման մակադիրներ

Չանազան տիպի ուսերը կցվածքներում միացնելու համար գործ են անում հատուկ, այսպես կոչվող փոխանցման մակադիրներ: Նրանք ծառայում են նրա համար, վորպես զանազան բարձրութուն ունեցող ուսերը կծվածքում միացնելիս, այդ յերկու ուսերի գլխիկների կատարը և կողքի աշխատող կողը գտնվեն միևնույն հարթութուններում: Դրա համար փոխացման մակադիրը շինվում է աստիճանավոր և կորցրած միացվող ուսերի տիպերին համապատասխան: Այդ դեպքերում նույնպես գործադրվում է աստիճանավոր մակադիր:

Բ ո լ տ ն ր

Բոլորը ծառայում են մակադիրները կցվածքներում ձգվելու համար:

Իրենց ձևով բոլորները բաժանվում են՝ քառակուսի, ուղղանկյուն, կիսաշրջանաձև, վեց կողանի և կեսատանձաձև գլխիկներով: Նրանց հաստութունը լինում է 19 և 22 միլիմետր:

կցվածքում յերկու մեջ տեղի գոյականները պետք է դասավորված լինեն գծի ներսը. ֆնացածները — դուրսը: Այդպիսի դասավորութայն գեպքում կաղմը ունի արտաբերից դուրս ընկնելու դեպքում բոլոր բոլտերը չեն կըտրովի:

Բոլտերը մուրճով մացնելն արգելվում է:

Բոլտային գոյականները պտտեցնելու համար դորձադրվում են բոլտի բանալիներ: Այդ բանալիները յերկայնացնելը բոլտերի շատ ուժեղ վնասման համար արգելվում է: Բոլտերի այդպիսի վնասման դեպքում շոգի ժամանակ ունի բոլտերը չեն կարող յերկարանալ և գիծը կարող է մի կողմ ուղղել:

Բոլտի բանալիները լինում են յերկու տեսակ՝ 22 միլիմետր շառավիղ ունեցող բոլտերի համար (ունի I-ա, II-ա և III-ա) բանալու յերկարութունը 550 միլիմետր է, 19 միլիմետր շառավիղ ունեցող բոլտերի համար (ունի IV-ա տիպի) բանալու յերկարութունը 370 միլիմետր է: Այդ յերկարութունը ընտրված է այն հաշվով, վորպեսզի միջակ մարզու ուշտով պրտաբերիս գոյականները կարելի լինի բավական պինդ ձգել առանց բոլտի պողոսիկը փչացնելու:

Գծում չպտտվող գոյականներ գտնելու դեպքում հարկավոր է նրանց 2 կամ 3 անգամ նավթի մեջ թաթախել, վորից հետո նրանք մեծ մասամբ պտտաւահանվում են:

Մ ե ջ դ ի ր ն ե ր

Գնացքի շարժման դեպքում բոլտերի վրայի գոյականները ցնցումից թուլանում և սկսում են պտտաւահանան լինել, մակաղիւրները դադարում են քիփ կըսք

չել ունիւն և չեն աշխատում, ունի հետ վորպես մի ամբողջ մարմին: Վորպեսզի գոյական պտտաւահանան չլինի, նրա և մակաղիւրի արանքում բոլտի վրա հագցըրվում է դասանակավոր մեջղիւր: Մեր յերկաթուղիներում դորձագրվում են դասանակավոր մեջղիւրներ պինդ պողպատից: (Նկար 18):

Հակախաղացքներ

Հակախաղացքները (ПРОТИВОУГАНЫ) ծառայում են ունիւրի և շղալների խաղացքին հակադորձողութայն համար:


Խաղացք կոչվում է անցնող գնացքների աղղեցութայն տակ գծի յերկարութայնը, ունիւրի և շղալների տեղաշարժութայնը: Գծով վորքան շատ գնացքներ անցնեն, վորքան նրանք ծանոթ լինեն և նրանց արագութայնը մեծ լինի, այնքան ունիւրը և շղալները շատ են խաղացվում: Գնացքները արգելակելիս, մանավանդ թեքվածքներում, գծի խաղացքը, ավելանում է:

Խաղացքի դեմ իբրև պայքարի միջոց ծառայում են բոլտային (Նկար 19) կամ սեպավոր սեղմակները (Նկար 20), վորոնք քիփ ընդգրկում են ունիւրի ստորոտը և իրենց ցածի մասով հենվում են շղալին:


Վորովհետև մի շղալը չի կարող դիմադրել խաղացքին, ուստի դրան դիմադրութայնը ուժեղացնելու համար մի քանի շղալներ, գծի մեջտեղը, դարսվում են պահանգներ և շղալների ծայրին ցցվում են ցցիկներ:

Այդ ձևով ստեղծված հակախաղացքային սարքվածքը (սեղմակներ, պահանգներ, ցցիկներ) իրենց


ներկայացնում և «դիմհար», վորն իր վրա ընդունում է գծի խաղացքը և չի թույլ տալիս ուղիղի և շալչին առաջ շարժվելու: Սեղմակի կանոնավոր աշխատանքի համար անհրաժեշտ և, նա քիփի կպչե ուղիղի և շալ-



նկար 18




նկար 19



նկար 20

լին: Յեթե հակախաղացքային սեղմակը շալչին քիփ կպցրած չլինի (նկար 21), — գծի հսկողը պետք է թուլացնե բոլորը, կամ հանե սեղմակի սեպը, սեղմակը քիփ սեղմել շալչին և դրանից հետո պնդացնել բոլոր կամ

ցցել սեպը: Յեթե պահանգները շալչներից հեռացել, կամ շեղվել են, — գծի հսկողը պետք է այդ մասին հազորդե գծի բրիգադիրին:



նկար 21


Սլաքային ուղեփոխներ

Գնացքը մեկ գծից մյուսին անցնելու համար շինվում են սլաքային ուղեփոխներ: Յուրաքանչյուր ուղեփոխի կազմի մեջ մտնում են. ա) գնացքին այս կամ այն գիծը ուղղող սլաքն ուղեփոխման մեխանիզմով վորը գնացք ուղղում է այս, կամ այն գիծը, բ) խաչմերուկը, վորը զբվում է յերկու ուղիղի համարան տեղում և ծառայում է անխիչների բանդաժներին պոուսկների (ուերուգանների) ազատ անցնելու համար, գ) սլաքի և խաչմերուկի միջևի փոխադրական կորույթը թևակը (переводная тяга), Նկար 22-ում ներքեը թվանդարանքում, (նկար 22): Նկար 22-ում ներքեը թվանդարանքում ցույց են տրված. 1 — մայր ուղիղ (рамный рельс), 2 — լեզվակը (перо остряк), 3 — փոխադրական թևակը (переводная тяга), 4 — փոխադրական կորույթը (переводная кривая), 5 — խաչմերուկի տեղը:

Նկարի վերևում ցույց է տրված առանձին խաչմերուկը՝
 1—պտիկը (сердечник), 2—խաչմերուկի թևը (УСОВИК),
 3—հակառելսը (контррельс)։

Սլաքը բաղկացած է յերկու արտաքին անշարժ
 ուղիներից, վորոնք կոչվում են մայր ուղիներ և յերկու
 ներքին շարժական ուղիներից, վորոնք կոչվում են
 ծայրեր, կամ լիզվակներ։

Խաչմերուկը բաղկացած է սրտիկից և նրան հակ-
 վող խաչմերուկային թևի ուղիներից, կամ, ինչպես
 նրանց անվանում են «խաչմերուկային» թևերից
 (УСОВИЦОВ)։



Նկար 22:

Խաչմերուկի դիմացը, յերկու հակադիր ուղիների
 ներքին կողերի մոտ դարսվում են հակառելսներ նրա
 համար, վորպեսզի անխիղճների բանդաժի կատարները

ընկնեն խաչմերուկի այն շրջանի մեջ, վորի մեջ նը-
 րանք գնացքի ընթացքով պետք է ընկնեն։

Արհեստական կառուցվածքներ

Կամուրջների վրայի յերկաթուղային պաստառը
 բաղկացած է իր պնդացումներով, կամրջային գլխո-
 ներից, ապահովության հարմարանքներից և վրաքա-
 շից։


Կամուրջային գլխոնները պատրաստվում են շա-
 մից և ամրացվում են կամրջի ֆերմաներին թաթավոր
 բուրեղով դա թաթը կանոնավոր դիրք ընդունեն, իր
 գլխիկներով ընդգրկելով ֆերմայի թարևքը (նկ. 24)։
 Գլխոնների միջև տարածությունը 15 սանտիմե-
 րից վոչ ավել։ Ռելսերի կտրվածքները տեղափոխվում
 են կախված գրությամբ մինչև յերեք սանտիմետր
 իրար մոտեցած յերկու կամրջային գլխոնների մեջ
 ծածկող տափակ մակագրիչների ոգնությամբ։

Յերկու ուղիային ողակների յերկարությունից
 կարճ կամուրջների վրա ուղիների միջև արանքներ չեն
 թույլատրվում։ Այն կամուրջները վրա, վորոնց վրա
 դրված են հավասարման սարքեր, արանքներ նույն-
 պես չեն թույլատրվում։ Բոլոր մնացած կամուրջներում
 ուղիների արանքները տվյալ տաքության համար պետք
 է լինեն նորմալ։ Արանքների մեծությունը սահման-
 վում է յուրաքանչյուր յերկաթուղում դժի սպասարկ-
 ման պետի կարգադրությամբ։

Այն կամուրջներում, ուր կամուրջային պահա-
 պաններ չկան, դժի հսկողը պարտավոր է կամրջի բո-
 լոր մասերը պահել մաքուր թույլ չտալով աղբը, ա-
 վազը, ցիխը, ձյունը և սառույցը անցման շենքերի

արանքային մասերում, հենարաններում և յենթաֆերմային սրահակներում: Բացի դրանից գծի հսկողը թույլ չպիտի տա ծրին լճանալու թե կամըջի մոտի պաստառի վրա, և թե ֆերմային սրահակների, մետաղյա առվերի մեջ, նույնպես հետևել հակահրդեհային հարմարանքների սարքին դրությանը:

Հակահրդեհային նպատակներով 10 մետրից ավել յերկարություն ունեցող մետաղյա և 3 մետրից ավել յերկարություն ունեցող փայտյա բոլոր կամուրջների վրա դրվում են կոտիկներ (КОДКИ) ջրով և սըրբիչներով (швабры):



Նկ. 23

Նկար 24:

Ձրի հորիզոնի բարձրանալուն հսկելու համար բոլոր կամուրջների մոտ ամրացվում են ջրաչափական ձողեր:

Ուղղվակներին հսկելիս անհրաժեշտ է հետևել նրանց միջով ջրի կանոնավոր անցմանը և թույլ չտալ նրանց անցքերի աղբյուրը:

Այն տեղերը, վորտեղ յերկաթուղային գիծը հատվում է, իր պաստառի հետ միևնույն մակերեսի վրա դանվող խճուղի կամ սայլի ճանապարհի հետ, — կոչվում են գծանցներ: Գծանցները լինում են դժանցային պահպանների կողմից պահպանվող և չպահպանվող:

Գիծը պատելիս գծի հսկիչը պետք է հետևի, վոր գծանցները պահվեն մաքուր, ուլտի և հակառետի միջի ջորդանը միշտ մաքրված լինի ցիխից, սառուցից և ձյունից, կամուրջիկներն ու գծանցների յելքերի տակով անցնող ջրահեռաց խողովակները աղբոսված չլինեն: Ձրահպանվող գծանցների մաքրումը և հսկողությունը կատարում է գծի հսկողը: Այն անտաքությունների մասին, վորոնք գծի հսկողը չի կարող սեփական ույժերով վերացնել, նա զեկուցում է գծի բրեգադիրին:

Գծային նշաններ և դիմհարներ

Գծի հսկողը պարտավոր է հսկել բոլոր գծային նշանների կանոնավոր և սարքին պահմանը:

- 1) վոր բոլոր սյուները կանխամ լինեն ուղհայաց — թեքված չունենան.
- 2) վոր սյուների վրա ջարդված ցուցակներ չլինեն.
- 3) վոր բոլոր նշանների և ցուցակների վրա պարզորոշ մակագրեր լինեն:

նկատած անսարքություններն մասին—հաղորդել
գծի բրիգադերին:

Հողի պատարուի կողքին, ամրացվում են հետև-
յալ գծային նշանները.

ա) Կիլոմետրային նշան—սյունը ցուցակի հետ,
կիլոմետրների ընթացքով աջ կողմից.

բ) Թեքման նշան, վորը բաղկացած է սյունին
ամրացրած գծի թեքվածքը և այդ թեքվածքի տարա-
ծությունը ցույց տրող թվանշաններով 2 տտխտակ-
ցուցակներից.

գ) «Սուլիչ» ցուցիչ—սյունը «ս» տառով.

դ) Պիկետի փայտե, կամ քարե նշանն իր թվա-
նշանով, վորը ցույց է տալիս պիկետի համարը.

յե) Կորույթի ցուցիչը—սյունիկ, վորն ամրացվում
և յուրաքանչյուր կորույթի սկսբում, մեջտեղը և վեր-
ջում գծի պտույտի անկյունը, կորույթի շառավիղը և
նրա յերկարությունը ցույց տվող մակագրություն-
ներով.

զ) Սահմանապահային սյունիկները—արտողման
շերտի սահմանի վրա:

ե) Նշաններ—«արգելակման սկիզբը և վերջը».

ը) Նշաններ—«փակիր սնվածքը».

թ) Դիստանցիաների, ուղեշրջանների, բանվորա-
կան ուղեմասերի և գծային պտույտների սահմանների
ցուցիչները:

Կայարանային գծերի միացումներում ցցվում են
սահմանային սյունիկներ ցույց տալու համար այն

տեղը, վորից հեռու չի կարելի տեղավորել շարժական
կազմը:

Սահմանային սյունիկները դրվում են գծերի մեջ
այն տեղում, վորտեղ ռելսների գլխիկների արտաքին
կողերի միջի տարածությունը 2 մետր 13 սանտիմետ-
րից պակաս չէ: Սահմանային սյունիկի բարձրու-
թյունը—կես մետր է բալաստի մակերեսից:

Կայարաններում փակուղային գծերը վերջանում
են դիմհարներով, վորոնք շինվում են դանազան տի-
պի—ռելսային, փայտե, հողե և այլն:

Ռելսային ծիրի լայնությունը

Գծի ուղիղ մասերում յերկու ռելսերի բարձրու-
թյունները պետք է գտնվեն մակերեւոյթի վրա: Գծի
ուղիղ մասերի լայնությունը շարունակ հավասար է
1524 միլիմետրի, իսկ կորույթներում արվում է ընդ-
լայնումն, վորը ցուցված է ստորին բերված աղյու-
սյակում.

Կորույթների շառավիղը մետրերով	Գծի նորմալ լայնու- թյունը
350 և պակաս	1540 միլիմետր
351-ից մինչև 450	1535 »
451-ից մինչև 600	1530 »
601-ից ավելի	1524 »

Գծի ուղիղ և կոր մասերում թույլատրվում է
ընդլայնու սահմանված նորմալի դեպ 5 միլիմետրից
վոչ ավել և նեղացումն 2 միլիմետրից վոչ ավել:


Ելեկտրոֆիկայացրած ու ավտոբլոկիրովկայացրած ուղեմասերի գիծը

Ավտոբլոկիրովկայացրած ուղեմասերում յուրաքանչյուր բլոկ—ուղեմասի սեղանը բաժանվում են հարևան բլոկ—ուղեմասերի սեղանից հատուկ առանձնացնող հորինվածքներով, վորպեսզի ելեկտրական հոսանքը չկարողանա անցնել մեկ ուղեմասի սեղանից մյուս ուղեմասի սեղանը: Այդպիսի հորինվածքներից մեկը հանդիսանում է «մեկուսացած կցվածքը»: Կցվածքը մեկուսացումը կայանում է նրանում, վոր ստվորական յերևույթ է մակադիրների փոխարեն դործադրվում են բոլորով ձգվող փայտե, (հաճախ, կամ կաշնե) կամ յերկաթե մեկուսացումով մակադիրներ: Կցվածքում սեղանի ճակատների մեջ դրվում են կաշվից, կամ ֆիրուից միջնադիրներ (նկար 25), վորոնց խնամքը ընկնում է գծային հսկողի պարտականությունների մեջ: Ռելսային մեկուսացած կցվածքը պահանջում է դեպի իրան հատակ, զգուշ վերաբերմունք տշխատանքների ժամանակ՝ չի թուլատրվում սելսային արանքը 4 միլիմետրից պակասեցնել:


Ավտոբլոկիրովկայացրած ուղեմասերում գծային աշխատանքներ կատարելու համար գործ են անվում սովորական գործիքներ և ինվենտար բացի այնպիսիներից, վորոնք աշխատանքի ժամանակ կարող են առաջացնել ելեկտրական հոսանքի անցումն մի սեղանից մյուսին և լույսաֆորների ամբողջ ազդանշանների խախառնում: Ուստի գծային շարունակները և գծային վազոնիկները ու գրնդինաները սանինները դործադրվում են վոշ ամբողջ, ինչպես սովորաբար, այլ յերկու

մասերից բաղկացած, վորոնց մեջ միջնորդվում է կաշի, կամ ֆիրու:

Ելեկտրական հոսանքը սեղանի միջով անցնելու համար ծառայում են կցվածքների մոտ սեղանի հետ



Նկար 25



Նկար 26

շտեպսեիններով միացվող հատուկ սելսային կապերը, վորոնց շտեպսեինները պետք է քիփ մտնեն սելսի վըզերում շահալիւծ անցքերը: Մետաղալարային միացնողները կամ կապերն ամբացվում են մակադիրներ


Ելեկտրոֆիկայացրած ու ավտոբլոկիրովկայացրած
ուղեմասերի գիծը

Ավտոբլոկիրովկայացրած ուղեմասերում յուրաքանչյուր բլոկ—ուղեմասի սելսերը բաժանվում են հարևան բլոկ—ուղեմասերի սելսերից հատուկ առանձնացնող հորինվածքներով, վորպեսզի ելեկտրական հոսանքը չկարողանա անցնել մեկ ուղեմասի սելսերից մյուս ուղեմասի սելսերը: Այդպիսի հորինվածքներից մեկը հանդիսանում է «մեկուսացած կցվածքը»: Կցվածքը մեկուսացումը կայանում է նրանում, վոր սովորական յերևույթ է մակադիրների փոխարեն գործադրվում են բոլորով ձգվող փայտե, (հաճարե, կամ կաղնե) կամ յերկաթե մեկուսացումով մակադիրներ: Կցվածքում սելսերի ճակատների մեջ դրվում են կաշվից, կամ ֆիբրայի միջնադիրներ (նկար 25), վորոնց խնամքը ընկնում է գծային հսկողի պարտականությունների մեջ: Ռելսային մեկուսացած կցվածքը պահանջում է դեպի իրան հատակ, զգուշ վերաբերմունք տշխաասանքների ժամանակ՝ չի թույլատրվում սելսային արանքը 4 միլիմետրից պակասեցնել:


Ավտոբլոկիրովկայացրած ուղեմասերում գծային աշխատանքներ կատարելու համար գործ են անում սովորական գործիքներ և ինվենտար բացի այնպիսիներից, վորոնք աշխատանքի ժամանակ կարող են առաջացնել ելեկտրական հոսանքի անցումն մի սելսից մյուսին և լույսաֆորները ամբողջ ազդանշանների խախառնմն: Ուստի գծային շարլոնները և գծային վազոնիկների ու գրնդիսանների սանիները գործադրվում են վոչ ամբողջ, ինչպես սովորաբար, այլ յերկուս

մասերից բաղկացած, վորոնց մեջ միջնորդվում է կաշի, կամ ֆիբրա:

Ելեկտրական հոսանքը սելսերի միջով անցնելու համար ծառայում են կցվածքների մոտ սելսերի հետ



Նկար 25




Նկար 26

շտեպսելներով միացվող հատուկ սելսային կապերը: վորոնց շտեպսելները պետք է քիփ մտնեն սելսի վրեզերում շաչափած անցքերը: Մետաղալարային միացնողները կամ կապերն ամբացվում են մակադիրները

վրա կլիպսեր կողմող հատաճանկիկներով (նկ. 26):
 Բացի այդ կապերից, նաև գործադրվում են նկար
 27-ում ցույց տված միացումներ: Շպալների ու կոս-
 տիլների տակհարման և բուլտերի լրացուցիչ պնդաց-
 ման դեպքում պետք է պահպանել հատուկ զուշու-
 թյուն, վորպեսզի չփայցնել միացումը և չընդհատել
 ելեկտրական հոսանքի անցնելը:

Պտույտի ժամանակ յեթե նկատվի դուրս ընկած
 միացման շտեպսել կտրված միացում, սրա ծայրը
 կտրված կցվածքից դուրս ընկած Ֆիրրա, կամ կաշի
 կից սելաների գլխիկների շփումն և բալաստի վերին



Նկար 27

մասի ու սելանի ստորոտի միջև 30 միլիմետրից պակաս
 բացատ, — այդ դեպքում բոլոր այդ անսարքություն-
 ների մասին գծի հսկողը պետք է հաղորդի գծի բրի-
 գադիրին:

Չ ն ա պ ա յ ք ա ր ր

Չնի դեմ պայքարը բաժանվում է յերկու հիմ-
 նական աշխատանքի խմբերի՝

ա) աշտպանման բնույթի աշխատանքներ և
 միջոցառումներ, վորոնք ուղղված են ձյունը յերկա-
 թուղային գծի վրա չթողնելու համար:

բ) ձյունը դժից հեռացնելու աշխատանքներ:

Գիծը, յեթե նա անտառով պաշտպանված չէ,
 պատսպարվում է ձնի կիտվածքներից հետևյալ կերպ՝
 ա) մշտական ցանկապատերով, բ) փոխադրական աս-
 պարներով և գ) կենդանի տունկերով: Մշտական ցան-
 կապատները շինվում են անընդհատ, կամ ցանցավոր:
 Այդ ցանկապատները ձյունը չեն թողնում գծի վրա
 մինչև այն ժամանակ, քանի վոր ինքը ցանկապատն
 ամբողջովին ձյունով չծածկվի:

Փոխադրական ցանցավոր ասպատները ձյունը
 պահում են ավելի շատ, քան մշտական ցանկապատը:
 և նրանից ավելի արժան են նստում: Յերբ ձնի պատ-
 նելը ասպարի մոտ բարձրանում է նրա բարձրության
 յերկու յերրորդական մասով, այդ դեպքում ասպարի
 աշխատանքը ընդհատվում է և ձյունն սկսում է ծած-
 կել նրան: Այդպիսի դեպքերում ասպարները հանվում
 են և գրվում են ձնի պատանելի վերևում:


Ասպատները դրվում են մինչև ձմեռվա սկիզբը և
 պինդ կապվում են բիրերին: Պաշտպանման ավելի
 հուսալի միջոց հանդիսանում են ծառա-թփայլին տան-
 կերը յերկաթուղային պատտառի յերկարությամբ:

Գծի ձնից ձեռքով մաքրումը գործադրվում է
 այն տեղերում, վորտեղ ձնամաքրիչն իջեցրած դանա-
 կով չի կարելի անցթողնել, որինակ, վարքաշը չհան-
 ված գծանցներով, սլաքների ու կամրջների վրայով
 սեմաֆորային վատնակներով (педаль):

Կայարանները (перегон) և կայարանային մե-
 ծաքանակ ուղիները մաքրումը կատարվում է ձնա-


մաքրիչներով: Գծի վրայի լուրջ խոչնդոտները ձևա-
մաքրիչի ազատ անցնելու համար իջեցրած գանակնե-
րով աշխատելիս, ինչպես որինակ՝ կամուրջները գր-
ծանցները, վորոնց վրա վրաքաշը հանված է, սլաք-
ները, սեմաֆորների վոտնակները (педаль), մեկուսա-
սացած կցվածքները և այլն, վորոնք պահանջում են
դանակի բարձրանալը, պատասպարվում են հատուկ
նշաններով (նկ. 28 և 29): Կամուրջների վրա վրաքա-
շը և զլղոտները ձևից մաքրվում են ձեռքով և ամբող-
ջությամբ. գծանցների վրա վրաքաշը մաքրվում և
ռելսի գլխիկի մակերևույթին հավասար, կայարանա-
յին գծերում սլաքները լրիվ կերպով են մաքրվում
նայև բոլոր այն տեղերը, վորոնց անցած ձևամաքրի-
չը չի կարողացել մաքրումը լրիվ կատարել: Բոլոր
կցվածքները պետք է մաքրվեն, ձևից նրանց գրու-
թյունը ստուգելու համար:

«Բարձրացնել գանակը»



Նկար 28:

«Իջեցնել գանակը»



Նկար 29:

Գծի հսկողը պարտավոր է հետևյալ ձևամաքրիչ-
իների անցնելու պատասպառող խոչնդոտի ազդանշան-
ների և նշանների անբողջությանը, իսկ ձևամաքրիչի

ազդանշաններով չպատասպարված խոչնդոտին մոտենա-
լիս, ցույց տալ կանգառի ազդանշան: Ցուցիչների ամ-
բացման տեղը և մինչև այդ տեղի տարածության մե-
ծությանը սահմանվում են յերկաթուղու պետի կողմից:

Գծի զննությունը բարձր ջրերի անցնելու ժամանակ
յեվ հեղեղների դեպքում:

Բարձր ջրերի, անձրևների և հեղեղների անցնե-
լու ժամանակ գծի հսկողը գիծը զննելիս պետք է ու-
շադրություն դարձնե, արդյոք ջուրը կանգ չի առնում
լիրերի (воспысь) մոտ, արդյոք չեն լցվել կյուվետները
և լեռնային արխերը ջրով, արդյոք կյուվետներից
ջուրը գո-րս չէ լցվում պատտառի վրա և չի ջրփռում
բալաստային խավը:

Լիրի իջվածքի, փլվածքի և նստվածքի և պա-
տառի վրա ջուրը կյուվետներից լցվելու դեպքում բա-
լաստային խավի ջրատարման, կամ հողի պատտառի
կողքին ձեղքվածքներ յերևալու դեպքում, գծի հսկողը
պարտավոր է վտանգավոր տեղը պատասպառել կանգա-
ռի ազդանշաններով և անմիջապես այդ մասին հա-
ղորդել գծի բրիգադիերին, հանդիսա ընթացքի, կամ
զնայքի կանգառման սահմանված ազդանշանները կա-
րող են հանվել միայն այդ տեղերը գծի բրիգադիերի
կամ ճանապարհի վարպետի կողմից զննելու հետո:

Գծի և կառուցվածքների կառավարչության գծի
սեկտորի պետ՝ ՄՈՒՐԱՇԿԻՆ



ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ



«Ազգային գրադարան»



NL0296067

A white rectangular label with a barcode and the text "«Ազգային գրադարան»" (National Library of Armenia) at the top and the number "NL0296067" at the bottom.

24.456

СССР

№ 963

Инструкция
путевому надсмотрщику
(обходчику)

Управлене Зак. Желдор